

# ՀՈՒՇԱԹԵՐԹ ՊԱՅԻԵՆՏԻ ՀԱՄԱՐ,

Որը կիրառում է ռիվարոքսաբան  
(քսարելտո)\* հետևյալ ցուցումով

**«խորանիստ երակների թրոմբոզի  
(ԽԵԹ) և թոքային զարկերակի  
թրոմբոէմբոլիայի (ԹՁԹԷ)  
բուժում և խորանիստ երակների  
թրոմբոզի(ԽԵԹ) և թոքային  
զարկերակի թրոմբոէմբոլիայի (ԹՁԹԷ)  
ռեցիդիվների կանխարգելում  
չափահաս պացիենտների շրջանում»**

\*Միայն բժշկի նշանակում

Տեղեկատվական կյուրժը պատրաստված է բացառապես այն պացիենտների համար, որոնք ընդունում են ռիվարոքսաբան (քսարելտո)՝ ըստ բժշկի ցուցումների:

Կյուրժը պատրաստված է ռիսկերի նվազեցման միջոցառումների շրջանակներում և գովազդային բնույթ չի կրում:

Պացիենտի ԱԱՀ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Բժշկի ԱԱՀ \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Բուժհաստատության անվանումը,  
հեռախոսահամարը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

# Ի՞ՆՉ Է ԹՐՈՄԲՈՉԸ ԵՎ ԻՆՉՈ՞Վ Է ԱՅՆ ՎՏԱՆԳԱԿՈՐ

## **Թրոմբը արյան խիտ մակարդուկ է, որը առաջանում է արյունատար անոթներում:**

Նորմալում արյան մակարդման պրոցեսը պաշտպանում է օրգանիզմը արյունահոսությունից՝ արյունատար անոթների վնասվելու դեպքում:

Երբեմն արյան մակարդման պրոցեսը դառնում է ախտաբանական և նպաստում է թրոմբների առաջացմանը: Թրոմբի վտանգը կայանում է նրանում, որ այն կարող է խաթարել կամ լրիվ պաշարել արյան հոսքը անոթներում: Թրոմբոզը իր հետևանքով ծանր և սպառնալի վիճակ է:



Սակայն պացիենտների մեծամասնության շրջանում հնարավոր է կանխել ծանր բար-դուությունների և կրկնակի թրոմբոզի զարգացումը, եթե իրականացվի ժամանակին համապատասխան բուժում:

# Ի՞ՆՉ Է ԽՈՐԱՆԻՍՏ ԵՐԱԿՆԵՐԻ ԹՐՈՄԲՈՉԸ ԵՎ ԹՈՔԱՅԻՆ ՉԱՐԿԵՐԱԿՆԵՐԻ ԹՐՈՄԲՈՒՄԲՈԼԻԱՆ

**Խորանիստ երակների թրոմբոզը** (ԽԵԹ) առաջանում է խորանիստ երակներում (ավելի հաճախ ստորին վերջույթներում) թրոմբերի գոյացման ժամանակ: Արյան հոսքի խանգարման պատճառով այդ վիճակը կարող է արտահայտվել այտուցով, ցավով, մաշկի գույնի փոփոխությամբ, սակայն երբեմն հիվանդությունը ընթանում է անախտանիչ:

Եթե թրոմբի մի մասը ոտքերի խորանիստ երակներում պոկվում է և անցնում սրտից դեպի թոքեր, կարող է տեղի ունենալ շնչառության և արյան շրջանառության համար կարևոր նշանակություն ունեցող արյունատար անոթների խցանում:

Այդ հիվանդությունը կոչվում է **թոքային զարկերակի թրոմբոէմբոլիա (ԹՉԹԷ):**



Թոքային  
զարկերակների  
թրոմբոզերովիա

Խորանիստ երակների  
թրոմբոզ

# ԹՐՈՄԲՆԵՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԲՈՒԺՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ

---

Խորանիստ երակների թրոմբոզի և թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի հիմնական բուժման մեթոդը հակամակարոֆիլների կիրառումն է, որոնք նշանակվում են արյան մակարոֆեիոլթյունը նվազեցնելու («արյունը նոսրացնելու») և թրոմբների առաջացումը կանխարգելելու համար: Հակամակարոֆիլներով բուժման ընթացքում թրոմբոզին ուղեկցող ախտանիշները սովորաբար նվազում են և հաճախ լրիվ անհետանում: Հակամակարոֆիլ դեղերի նշանակումը օգնում է.

- ◆ կանխել արդեն առաջացած թրոմբի աճը և չափերի մեծացումը,
- ◆ կանխել նոր թրոմբների առաջացումը,

- ◆ կանխել թոքային զարկերակի թրոմբոէմբոլիան (թրոմբի անջատումը և արյան հոսքով թոքային զարկերակում հայտվելը),
- ◆ նվազեցնել ախտանիշների արտահայտվածությունը,
- ◆ կանխել բարդությունների զարգացումը հետագա շրջանում:



Թրոմբների առաջացման կանխարգելման նպատակով հակամակարոդիչների կիրառման ժամանակ պետք է հետևել բժշկի խորհուրդներին:

# Ի՞ՆՉ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՄԱՆԱԼ ՔՍԱՐԵԼՏՈՅԻ (ՌԻՎԱՐՕՔՍԱԲԱՆԻ) ՄԱՍԻՆ

Քսարելտոն (ռիվարոքսաբանը) նոր պերորալ հակամակարդիչների խմբի դեղ է, որը նշանակվում է արյան մակարդեվիոլթյունը նվազեցնելու և թրոմբոզի առաջացումը կանխարգելելու նպատակով: Ռիվարոքսաբանով բուժման նշանակումը և տևողությունը որոշվում է բուժող բժշկի կողմից:

- ◆ Կարևոր է հետևել դեղաչափման սահմանված ռեժիմին և բաց չթողնել քսարելտոյի (ռիվարոքսաբանի) հերթական դեղաչափի ընդունումը:
- ◆ Քսարելտոյի (ռիվարոքսաբանի) ընդունման դադարեցման որոշումը կայացնում է բացառապես Ձեր բուժող բժիշկը:
- ◆ Բուժման տևողությունը որոշում է բժիշկը յուրաքանչյուր պացիենտի համար անհա-



տականորեն, հաշվի առնելով բազմաթիվ գործոններ:

- ◆ Տեղեկացրեք բուժող բժշկին բոլոր Ձեր կողմից ընդունվող այլ դեղամիջոցների մասին:
- ◆ Անպայման հայտնեք Ձեր բուժող բժշկին քսարելտոյի (ռիվարոքսաբանի) ընդունման մասին ցանկացած վիրահատություններից և ինվազիվ միջամտություններից առաջ (ստոմատոլոգիական և էնդոսկոպիկ միջամտություններ, պունկցիաներ, բիոպսիաներ և այլն):
- ◆ Մի դադարեք Ռիվարոքսաբանի ընդունումը առանց Ձեր բուժող բժշկի հետ խորհրդակցելու:
- ◆ Ռիվարոքսաբան (Քսառելտո) դեղի ընդունման դադարեցումը կարող է նպաստել կրկնակի թրոմբոզի ռիսկի բարձրացմանը և/կամ ընթացիկ թրոմբոզի վիճակի վատթարացմանը:

# ԵՐԲ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴԻՄԵԼ ԲԺՇԿԻ

Եթե Դուք ընդունում եք այնպիսի հակամակարդիչներ, ինչպիսիք են քսարելտո (ռիվարոքսաբանը), շատ կարևոր է իմանալ հնարավոր կողմնակի ազդեցությունն ների մասին:

**Արյունահոսությունը առավել հաճախ հանդիպող կողմնակի ազդեցությունն է:** Արյունահոսության պատճառով քսարելտո (ռիվարոքսաբանը) դադարեցնելու դեպքում, մի վերսկսեք դեղի ընդունումը ինքնուրույն, առանց բուժող բժշկի հետ խորհրդակցելու:

**!** **Արյունահոսության տեսքով բարդության առաջացման դեպքում դեղի հաջորդ դեղաչափի ընդունումը պետք է հետաձգել կամ բուժումը պետք է դադարեցվի՝ կախված իրավիճակից:**

**Բուժման դադարեցման կամ շարունակման մասին որոշումը կայացնում է բուժող բժիշկը:**



- ◆ Առանց պատճառի կամ փոքր վնասվածքների արդյունքում առաջացող կամ չափերով մեծացող կապտուկներ, քթային արյունահոսություններ, առատ արյունահոսություններ լնդերից, սովորականից ավելի երկար ժամանակահատվածում չդադարող արյունահոսություններ՝ կտրած վերքերի դեպքում:
- ◆ Սովորականից ավելի առատ դաշտան, դաշտանային արյունահոսություններ կամ արյունային արտադրություն հեշտոցից դաշտանադարարի ժամանակ:
- ◆ Վարդագույն կամ շագանակագույն մեզի առկայություն, արյունախառն կամ սև գույնի կղանք:
- ◆ Արյունախիտում (արյան կամ արյան մակարդուկների արտազատում հազի ժամանակ), արյունային փսխում կամ «սուրճի նստվածքի» նման փսխումային զանգված:
- ◆ Անբացատրելի այտուցվածություն, շարժողականության խանգարում կամ ցավ հողբրում:
- ◆ Անբացատրելի գլխացավ, գլխապտույտ և թուլություն:

# ԻՆՉՊԵՐՍ ԸՆԴՈՒՆԵԼ ՔՍԱՐԵԼՏՈ (ՌԻՎԱՐՕՔՍԱԲԱՆԸ)

- ◆ Թրոմբի կրկնակի առաջացման ռիսկը առավել բարձր է խորանիստ երակների թրոմբոզի և թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի դրվագներից հետո առաջին 3-4 շաբաթների ընթացքում, բայց պահպանվում է նաև դրանից հետո:
- ◆ Այդ պատճառով քսարելտո (ռիվարոք սաբալը) այդ ժամանակ նշանակվում է 15 մգ 1 դեղահաբ օրը 2 անգամ 21 օրվա ընթացքում հետագայում անցնելով 20 մգ օրը 1 անգամ:
- ◆ Խորանիստ երակների թրոմբոզի կամ թոքային զարկերակի թրոմբոէմբոլիայի ամենաքիչը 6 ամիս բուժումից հետո Քսարելտո (Ռիվարոքսաբան) դեղի խորհուրդ տրվող դեղաչափը կազմում է 10 մգ օրը 1 անգամ, կամ 20 մգ օրը 1 անգամ կախված ԽԵԹ կամ ԹՉԹԵ ռեցիդիվի ռիսկի և արյունահոսության ռիսկի անհատական հարաբերակցությունից:

- ◆ Դեղի 10 մգ դեղաչափի ընդունման անհրաժեշտության դեպքում, խորհուրդ է տրվում կիրառել Քսարելտոն (Ռիվարոքսաբան) դեղը բաց թողնվող համապատասխան դեղաչափով:
- ◆ 15 մգ և 20 մգ դեղաչափով Քսարելտոն (Ռիվարոքսաբան) դեղը անհրաժեշտ է ընդունել սնունդ ընդունելու ժամանակ: 10 մգ դեղաչափով Քսարելտոն (Ռիվարոքսաբան) դեղը կարելի է ընդունել սննդի ընդունումից անկախ:
- ◆ Քսարելտոն (ռիվարոքսաբանի) ընդունումը ամեն օր, միևնույն ժամին ուտելու ժամանակ, կօզնի խոսափել դեղահաբի ըմդունման բացթողումից:
- ◆ Անհրաժեշտության դեպքում քսարելտոն (ռիվարոքսաբանի) դեղահաբը կարելի է մանրացնել և խառնել ջրի կամ հեղուկ սննդի հետ, անմիջապես սնունդ ընդունելուց առաջ:
- ◆ Մանրացված դեղահաբը խմելուց հետո անհրաժեշտ է անհապաղ ընդունել սնունդ:

# ԵԹԵ ԲԱՑ Է ԹՈՂՆԿԵԼ ՀԵՐԹԱԿԱՆ ԴԵՂԱՀԱԲԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ



## **15 մգ օրը 2 անգամ ռեժիմի դեպքում.**

- ◆ Անհապաղ ընդունել քսարելտո (ռիվարօքսաբան)՝ 30 մգ օրական դեղաչափին հասնելու համար: Այսպիսով 15 մգ երկու դեղահաբերը կարելի է ընդունել միաժամանակ:
- ◆ Հաջորդ օրը անհրաժեշտ է շարունակել պրեպարատի կանոնավոր ընդունումը՝ նշանակված ռեժիմին համապատասխան:



## **10 մգ և 20 մգ օրը 1 անգամ դոզավորման ռեժիմի դեպքում.**

- ◆ Անհապաղ ընդունել քսարելտո (ռիվարօքսաբան): Պետք չէ կրկնապատկել ընդունվող դեղաչափը՝ նախորդ բաց թողնվածը լրացնելու համար:
- ◆ Հաջորդ օրը անհրաժեշտ է շարունակել դեղի կանոնավոր ընդունումը՝ նշանակված ռեժիմին համապատասխան:

# ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

---

Ես ընդունում եմ քսարելտո (ռիվարոքսաբանը) հետևյալ դեղաչափով.

- 15 մգ օրը 2 անգամ,
- 20 մգ օրը 1 անգամ կամ
- 10 մգ օրը 1 անգամ

Այլ դեղեր

---

---

---

---

---

Տեղեկատվություն բուժող բժշկի համար

---

---

---

---

Քսարելտո (ռիվարոքսաբան) դեղի կիրառման ընթացքում առաջացած կողմնակի ազդեցությունների մասին խնդրում ենք հարդորել բուժող բժշկին և/կամ ՀՀ ԱՆ ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն,

հեռ.՝ (+374 10) 20 05 05, (+374 96) 22-05-05 և/կամ «Բայեր» ընկերությանը, հեռ.՝ +7 495 231 1200 և +374 98 78 70 40 (աշխատանքային օրերին Մոսկվայի ժամանակով ժամը 8:00-ից մինչև 19:00-ը):

**ԲԸ «Բայեր»,**  
107113, Մոսկվա, 3-րդ Ռիբինսկայա փող., 18, շենք 2:

Հեռ.՝ +7 (495) 231 12 00  
[www.pharma.bayer.ru](http://www.pharma.bayer.ru)